Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
20.07.2015թ. թիվ 206-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

_____

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի **(այսուհետ՝ Նախագիծ)** վերաբերյալ մասնագիտական կարծիք ներկայացնող Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Փաստաբանների պալատ)** աշխատանքային խմբի **(այսուհետ՝ Աշխատանքային խումբ)** գործունեության ընթացակարգը:

1.2. Աշխատանքային խումբը գործում է հասարակական հիմունքներով:

1.3. Փաստաբանների պալատն Աշխատանքային խմբի համար ապահովում է անհրաժեշտ նյութատեխնիկական պայմաններ, այդ թվում՝ նիստերի անցկացման համար համապատասխան աշխատասենյակ:

1.4. Աշխատանքային խմբի աշխատանքների հետ կապված անհրաժեշտ գործավարությունը (այդ թվում՝ նիստերի արձանագրումը), ինչպես նաև տեխնիկական աջակցությունն իրականացնում է Փաստաբանների պալատի աշխատակազմը:

1.5. Աշխատանքային խումբը գործում է մինչև Նախագծի վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին համապատասխան իրավական ակտի հրապարակման օրը:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Աշխատանքային խումբը կազմված է Փաստաբանների պալատի նախագահի կողմից նշանակված համակարգողից **(այսուհետ՝ Համակարգող)** և գիտական աստիճան ունեցող 12 (տասներկու) փաստաբան անդամներից:

2.2. Աշխատանքային խմբի Համակարգողը՝

1) հրավիրում և վարում է Աշխատանքային խմբի նիստերը.
2) ներկայացնում է Աշխատանքային խումբը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ հարաբերություններում.
3) համախմբում է Աշխատանքային խմբի առանձին անդամների կարծիքները և ներկայացնում է Աշխատանքային խմբի հաստատմանը.
4) կատարում է սույն Կարգով սահմանված, ինչպես նաև Աշխատանքային խմբի բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ գործառույթներ:

2.3. Աշխատանքային խմբի հիմնական նպատակը Նախագծի վերաբերյալ Փաստաբանների պալատի մասնագիտական կարծիքի **(այսուհետ՝ Կարծիք)** մշակումը և ներկայացումն է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ստեղծված սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովին և/կամ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովին:

2.4. Աշխատանքային խումբը Նախագծի վերաբերյալ կարող է ներկայացնել ամփոփ կարծիք, կամ կարծիքներ՝ ըստ Նախագծի հրապարակված մասերի:

3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Աշխատանքային խմբի գործունեությունն իրականացվում է նիստերի, ինչպես նաև էլեկտրոնային կամ այլ կարգով քննարկումների կամ փաստաթղթերի և այլ նյութերի փոխանակման միջոցով:

3.2. Աշխատանքային խումբը նիստերի օրակարգի, նրա աշխատանքը սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին, որպես կանոն, ծանուցվում են Համակարգողի կողմից՝ էլեկտրոնային փոստով՝ ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից առնվազն 2 (երկու) օր առաջ:

3.3. Օրակարգի հետ միասին, սակայն ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից 1 (մեկ) օր առաջ, Աշխատանքային խմբին են տրամադրվում նաև քննարկվելիք հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերը:

3.4. Աշխատանքային խմբի նիստն իրավազոր է, եթե ներկա են Աշխատանքային խմբի անդամների կեսից ավելին:

3.5. Աշխատանքային խումբը որոշումներով լուծում է հետևյալ հարցերը՝

- Աշխատանքային խմբի անդամների միջև կատարում է աշխատանքի բաժանում,
- սահմանում է կարծիքները մշակելու և խմբի քննարկմանը ներկայացնելու ժամկետները,
- ամբողջությամբ կամ փոփոխված ընդունում է առանձին անդամների կողմից մշակված կարծիքները (այդ թվում՝ ամփոփ կարծիքը):

3.6. Աշխատանքային խմբի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ Աշխատանքային խմբի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3.7. Նիստի ընթացքը կարող է ձայնագրվել:

3.8. Եթե Աշխատանքային խմբի որևէ անդամ Աշխատանքային խմբի ընդունած որոշման կամ Կարծիքի վերաբերյալ ունի այլ դիրքորոշում (Աշխատանքային խմբի ընդհանուր դիրքորոշումից տարբերվող), ապա նրա ցանկությամբ այն գրավոր կցվում է Աշխատանքային խմբի համապատասխան որոշմանը կամ ամփոփ Կարծիքին:

3.9. Աշխատանքային խմբի կարծիքը՝ հաստատվելուց հետո եռօրյա ժամկետում, Համակարգողի ստորագրությամբ հանձնվում է Փաստաբանների պալատի աշխատակազմին: